Հաստատում եմ:
Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի ռեկտոր՝
պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյան
02.07.2020թ.

ԿԱՐԾԻՔ

Էմիլ Հրաչյայի Օրդուխանյանի՝ «Քաղաքական մշակույթի էվոլյուցիան Հայաստանի Հանրապետության քաղաքական գործընթացներում» Ի9.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման մասին

2020թ. հուլիսի 2-ին տեղի ունեցավ Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ Հասարակագիտության ամբիոնի նիստը, որին մասնակցում էին ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Է. Հովհաննիսյանը, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ.Շիրինյանը, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ.Հովհաննիսյանը, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտներ Ն.Տոնոյանը, Ս.Բարխուդարյանը, Ա.Փխրիկյանը, Ս.Մանուկյանը, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Լ.Սարվազյանը, քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ.Սուքիասյանը և դասախոս Ա.Կոծինյանը:

Քննարկվեց Էմիլ Հրաչյայի Օրդուխանյանի՝ «Քաղաքական մշակույթի էվոլյուցիան Հայաստանի Հանրապետության քաղաքական գործընթացներում» դոկտորական ատենախոսությունը՝ քաղաքական գիտությունների դոկտորի գիտական աստիճան հայցելու համար:

Ելույթ ունեցան պատմական գիտությունների թեկն., դոցենտ Է. Հովհաննիսյանը, իրավաբանական գիտությունների թեկն., դոցենտ Ս.Բարխուդարյանը, փիլիսոփայական գիտությունների թեկն., դոցենտ

Լ.Սարվազյանը, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ.Շիրինյանը, իրավաբանական գիտությունների թեկն., դոցենտ Ն.Տոնոյանը, քաղաքական գիտությունների թեկն., դոցենտ Հ.Սուքիասյանը:

Է.Հ. Օրդուխանյանի դոկտորական ատենախոսությունը նվիրված է ՀՀ-ում քաղաքական մշակույթի էվոլյուցիայի համալիր հետազոտությանը և վերլուծությանը՝ այն դիտարկելով քաղաքական գործընթացների համատեքստում, որտեղ, որպես կարևոր գործոն, նշանակալի դերակատարություն ունի նաև քաղաքական խոսույթը: Քաղաքական մշակույթի ձևավորման, փոխակերպումների, արդի վիճակի և զարգացման միտումների խորքային ուսումնասիրությունը քաղաքական գործընթացների համակողմանի վերլուծության միջոցով տվյալ աշխատանքին հաղորդում են հայեցակարգային նշանակություն:

Առաջադրված խնդրի արդիականությունն անկասկած է և՛ որպես հետազոտության թեմա, և՛ որպես հիմնախնդիր՝ ծառացած ՀՀ արդիականացման հրամայականի տեսանկյունից: Ակնհայտ է, որ քաղաքական մշակույթի նշանակությունն ու դերակատարությունը և դրա անվերապահ իմաստավորումն է, որ պայմանավորում են պետության հիմնարար զարգացման և քաղաքական արդիականացման հեռանկարը: Առանց քաղաքական մշակույթի ամբողջական համատեքստի, դրա առանձին կառուցվածքային բաղադրիչների հաշվառման բոլոր հետազոտությունները և դրանց արդյունքում արված դատողություններն ինչ-որ չափով դառնում են էկլեկտիկ:

ԽՍՀՄ լուծարումից հետո մինչհեղափոխական ՀՀ-ում հասարակական և քաղաքական կյանքի դիտարկումը փաստականորեն վկայում է, որ հռչակված քաղաքական սկզբունքները և արժեքները՝ ժողովրդավարական կարգի և քաղաքական կյանքի կազմակերպում, գաղափարական բազմակարծության խթանում, ընտրության իրավունքի ժողովրդավարական ամրագրում և իրացում, հանդիպեցին տարաբնույթ խոչընդոտների: Այս տեսանկյունից գիտության տրամաբանությունը հստակորեն պահանջում է այդ խոչընդոտների ախտորոշում, վերլուծություն և դրա հիմքի վրա գոյություն ունեցող խնդիրների համար լուծման ուղիների առաջարկում, ինչպես նաև ակնկալվող հեռանկարների կանխատեսում: Այս համատեքստի շրջանակներում օգնության է գալիս սույն աշխատանքում

ատենախոսի առաջադրած հիպոթեզը, այն է՝ ուսումնասիրել խնդիրները քաղաքական մշակույթի համալիրի ոսպնյակում:

Ատենախոսական աշխատանքի արդիականությունը բխում է արդի աշխարհում և մասնավորապես՝ ՀՀ-ում հետխորհրդային ժամանակաշրջանում տեղի ունեցող հասարակական և քաղաքական փոխակերպումների իմաստաբանական, արժեքաբանական, վարքաբանական, ինչպես նաև գործառնական դերը և նշանակությունն ուսումնասիրելու գիտական և գործնական պահանջից, որն իր ամբողջականության մեջ ներառվում է նաև քաղաքական մշակույթի համատեքստում: Քաղաքական մշակույթը, որը ձևավորվում է պատմականորեն և ունի հարաբերական կայունություն՝ որպես առանցքային գործոն, ազդում է քաղաքական գործընթացի համալիրի վրա, ինչն իր հերթին կարող է տարակերպ փոխակերպումների ենթարկվել որոշակի քաղաքական ժամանակում:

Այս տեսանկյունից Է.Հ. Օրդուխանյանի դոկտորական ատենախոսությունը շատ կարևոր գիտական նորույթ պարունակող և պահանջված հետազոտություն է քաղաքական գիտությունների բնագավառում: Դրանում առաջ քաշված նպատակը և խնդիրներն ունեն հստակ ձևակերպումներ, նորարարական են, որոնք իրենց հիմնավոր լուծումներն են ստացել ատենախոսի կողմից արված եզրակացություններում:

Ատենախոսության առաջին գլխում ատենախոսը համակողմանի համեմատական վերլուծության է ենթարկել քաղաքական մշակույթի և քաղաքական գործընթացի տեսական և մեթոդաբանական հիմքերը: Արդյունքում՝ արվել են գիտականորեն հիմնավորված մտահանգումներ, և առաջարկվել է քաղաքական մշակույթի ավելի ամբողջական սահմանում, որտեղ առանցքային նշանակություն է տրվել քաղաքական խոսույթին, որը, որպես համընդհանուր գործոն, ի տարբերություն այլ բաղկացուցիչների, առկա է բոլոր հասարակություններում:

Քաղաքական գործընթացի մասով ատենախոսն իրավացիորեն նշել է, որ դրա ուսումնասիրության որևէ կոնկրետ մոտեցում կարող է լինել արդյունավետ միայն համապատասխան իրավիճակում և քաղաքական ժամանակի պայմաններում: Այլ հանգամանքների առկայության դեպքում նույն մոտեցումը չի կարող լիարժեք

արդյունավետությամբ կիրառվել մեկ ուրիշ քաղաքական գործընթացի հետազոտության համար: Եվ հետևապես՝ անհրաժեշտ է հաշվի առնել նաև քաղաքական գործընթացի առանձնահատկությունները՝ պայմանավորված քաղաքական մշակույթի դրսևորման ձևով՝ որպես տվյալ հասարակության մեջ գերակայող մոդել:

Ատենախոսության երկրորդ գլխում ուսումնասիրվել է քաղաքական մշակույթի և խոսութային հաղորդակցության մեթոդաբանական հիմնախնդիրը, որի արդյունքում ատենախոսն իրավամբ հիմնավորել է խոսույթի՝ քաղաքական մշակույթը պայմանավորող դերը, ինչպես նաև առաջարկել է քաղաքական վարչակարգերի դասակարգում՝ հիմնվելով դրանց խոսութային առանձնահատկությունների վրա, որը նորույթ է քաղաքագիտության մեջ: Քաղաքագիտության մեթոդաբանական ապարատի համալրման տեսանկյունից նորույթ է նաև ատենախոսի մշակած և հետազոտության մեջ կիրառած քաղաքական մշակույթի խոսութային չափման (ՔՄԽՉ) մեթոդը, որը քաղաքական մշակույթի և քաղաքական վարչակարգի գնահատման նոր գործիք է: Ի դեպ՝ ՀՀ-ի դեպքում այս նոր մեթոդի կիրառությունը և արդյունքում ստացված ցուցանիշների համեմատությունը միջազգային հեղինակավոր համաթվերի հետ ցույց են տալիս դրա հուսալիությունը և հավատարժանությունը:

Ատենախոսության երրորդ գլխում ատենախոսը հետազոտել է հետխորհրդային ժողովրդավարացումը՝ այն դիտելով քաղաքական մշակույթի համատեքստում: Այսպիսի մոտեցումը թույլ է տվել միջազգային համաթվերի գործածության միջոցով իրականացնել համաժամանակյա համեմատական վերլուծություն և վեր հանել հետխորհրդային երկրներում հաստատված քաղաքական վարչակարգերի իրական պատկերը նաև դրանց փոխակերպումների տեսանկյունից, բացահայտել դրանց միջև տարբերությունները և ընդհանրությունները՝ նաև խնդիրը դիտարկելով արտաքին ինտեգրման տարուղղորդված գործընթացների համատեքստում՝ բացահայտելով հետաքրքիր մի իրողություն, այն է՝ ըստ միջազգային համաթվերի, ինտեգրվելով ոչ ժողովրդավարական բլոկում՝ ՀՀ-ն արձանագրել է ժողովրդավարության

ամենաբարձր ցուցանիշը: Այս հանգամանքը ևս հիմնավորում է ատենախոսի առաջադրած հիպոթեզի ճշմարտացիությունը:

Հետաքրքրական է այս գլխում առաջ քաշված մեկ այլ մոտեցում ևս, այն է՝ ժողովրդավարության կարծրատիպային մոդելների բեկանումը: Բացառիկ և տրամաբանված է ատենախոսի այն դիտարկումը, որ ժողովրդավարության արդյունավետությունը կախված է ոչ միայն դրա մեկնարկային պոստուլատների անվերապահ կիրառումից, այլև որևէ հասարակության կազմաբանության առանձնահատկությունների հաշվառումից: Գիտական անաչառությունը և տեսությունների ներդաշնակ կիրառությունը ատենախոսին իր հետազոտության մեջ հանգեցրել են այն կարևոր և հիմնարար հետևության, որ բազմական (plural) և, ենթադրում ենք նաև, միատարր (unitary) հասարակություններն օբյեկտիվորեն հակված են ժողովրդավարության իրական մոդելների, որոնց մասին հանգամանորեն նշված է հետազոտության մեջ: Այս առումով ուշագրավ են ատենախոսի կողմից հարավ-կովկասյան բազմական հասարակական կառուցվածք ունեցող երկրների սեգմենտար պատկերի և քաղաքական վարչակարգերի խորը վերլուծությունը, ինչպես նաև դրանց ժողովրդավարացման և քաղաքական կայունության համար կոնսոցիատիվ ժողովրդավարության մոտեցման առաջարկը, ինչը նույնպես նորույթ է այսօրինակ քաղաքագիտական հետազոտությունների համար: Սա հարստացրել է աշխատանքը, քանի որ ատենախոսն օգտվել է նաև հարակից գիտությունների՝ առաջադրված խնդրի լուծմանը սպասարկող տեսություններից, մասնավորապես՝ մշակույթի փիլիսոփայության և սոցիոլոգիայի ընձեռած լայն հնարավորություններից: Ի մասնավորի՝ կիրառվել են մշակութային ռելյատիվիզմի և մշակութային էթնոցենտրիզմի սկզբունքները, որոնք հնարավորություն են տվել համադրել հասարակության կազմաբանության և ժողովրդավարության կոնկրետ մոդելի կիրառության համատեղելիությունը հարավ-կովկասյան բազմական հասարակական կառուցվածք ունեցող երկրների՝ Վրաստանի և Ադրբեջանի դեպքերում: Այս հանգամանքը նաև ընդգծում է էական տարբերությունը հիմնարար և էկլեկտիկ հետազոտությունների միջև:

Ատենախոսության չորրորդ գլխում ատենախոսն անդրադարձել է ՀՀ-ում քաղաքական գործընթացի դրսևորման առանձնահատկություններին, որոնց

շրջանակներում իրավացիորեն հիմնավորել է, որ քաղաքական գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ-ում անհրաժեշտ է քաղաքական կարգի կայունացում և արդիականացման գործընթացի ինստիտուցիոնալացում, ինչպես նաև անհրաժեշտ է հետևողականորեն և անընդմեջ բարձրացնել հանրության քաղաքական գիտակցության մակարդակը քաղաքական սոցիալականացման գործակալությունների աշխատանքի արդյունավետացման միջոցով:

Սույն գլխում մեծարժեք է նաև 1991-2018թթ. ՀՀ-ում տեղի ունեցած բոլոր համապետական ընտրությունների վերլուծությունը՝ առանձնացնելով և բացահայտելով նախագահական, խորհրդարանական, սահմանադրական հանրաքվեների միջև քաղաքացիական և քաղաքական միավորների մասնակցության դինամիկան և առանձնահատկությունները, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի զեկույցները, ինչպես նաև քաղաքական խոսույթի ազդեցությունն այդ գործընթացների վրա:

Հարկ է ընդգծել նաև ՀՀ-ում ակտիվ քաղաքական մշակույթի ձևավորմանը խոչընդոտող գործոնների վերհանմանն ուղղված խնդրի հետազոտությունը, որի արդյունքում ատենախոսը ճշգրտորեն առանձնացրել է համապատասխան խնդիրները և առաջարկել է դրանց հաղթահարման իրատեսական ուղիներ:

Ատենախոսության վերջին գլուխը, թերևս, ամբողջացնում է սույն հետազոտության շրջանակները: Այն ներառում է քաղաքական մշակույթի նախադրյալների ձևավորումը Հայաստանի Առաջին Հանրապետության շրջանից մինչև մեր օրեր: Բարձր գնահատականի է արժանի ատենախոսի կողմից Առաջին Հանրապետության շրջանում քաղաքական մշակույթի ձևավորման պատմական նախադրյալների բացահայտումը, քանի որ դրա վերաբերյալ նախկինում երբևէ ուսումնասիրություններ չեն կատարվել նշյալ համատեքստում: Հայ ժողովրդի ժողովրդավարական ներուժի բխեցումը Առաջին Հանրապետության քաղաքական պատմության համատեքստի ուսումնասիրության միջոցով արժանի է բարձր գնահատականի՝ հաշվի առնելով 20-րդ դարի առաջին քառորդում ժողովրդավարության առաջին ալիքի տարածման գործընթացը:

Կիրառական հետազոտության տեսանկյունից ուշագրավ է սույն գլխում ՔՄԽՉ մեթոդի միջոցով արված վերլուծությունը, որը թույլ է տվել օպերացիոնալացնել 2017 և 2018թթ. ՀՀ-ում քաղաքական մշակույթի, քաղաքական վարչակարգի և քաղաքական խոսույթի վերաբերյալ ստացված հետազոտական արդյունքները, որոնք համապատասխանում են նաև այդ տարիներին քաղաքական վարչակարգի մասով ՀՀ-ի միջազգային ցուցանիշներին:

Առանձնահատուկ կարևոր է նաև խորհրդարանական մշակույթի կայացման դժվարությունների և հեռանկարների, ինչպես նաև 2018թ. ՀՀ-ում հեղափոխական քաղաքական գործընթացի վերլուծությունը, որի արդյունքում ատենախոսի կողմից կատարվել են արժեքավոր գործնական առաջարկներ: Իրավացիորեն հիմնավորվել է այն պնդումը, որ խորհրդարանականների խոսույթի որակն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդում է խորհրդարանի՝ որպես ներկայացուցչական մարմնի որակի և խորհրդարանական մշակույթի մակարդակի վրա: Իսկ հեղափոխական գործընթացը դիտվել է որպես մասնակցային քաղաքական մշակույթի զանգվածային դրսևորում, որի շրջանակներում բացահայտվել և հիմնավորվել են հեղափոխական գործընթացի հիմնական պատճառները, վերլուծվել են հեղափոխության ընթացքը, մեթոդները և տեխնոլոգիաները, սահմանվել են հեղափոխությունից ակնկալվող որոշակի արդյունքներ:

Ամենևին չստվերելով ատենախոսի կատարած ծավալուն և արժեքավոր աշխատանքը՝ հարկ է, այնուամենայնիվ, առանձնացնել որոշ դիտարկումներ, որոնք մեր կարծիքով, ավելի կհարստացնեին աշխատանքը:

1. Ատենախոսության մեջ որոշ մասնագիտական նորաբանությունների գործածության դեպքում զգացվում է դրանց առավել լայն բացատրության անհրաժեշտություն: Օրինակ՝ *«պրիվիլեկրատ»*, *«կրիմինոկրատ»* նորաբանական եզրույթները:
2. Քանի որ աշխատանքը վերաբերում է քաղաքական մշակույթին, ապա ակնհայտ է, որ անդրադարձ է եղել նաև ընդհանրապես մշակույթի հասկացությանը: Հետևապես՝ կարևոր է ատենախոսի մոտեցման հստակեցումը *«ենթամշակույթ»* և *«հակամշակույթ»* երևույթների վերաբերյալ՝ նկատի ունենալով նաև վերջին շրջանում խորհրդարանի

կողմից ընդունված *«քրեական ենթամշակույթի»* մասով օրենսդրական կարգավորումները:

3. ՀՀ-ում քաղաքական գործընթացի արդյունավետացման հիմնախնդիրները ատենախոսը մեծապես դիտարկել է ամերիկացի քաղաքագետ Սեմյուել Ֆ. Հանթինգթոնի *քաղաքական կարգի և արդիականացման տեսության* շրջանակներում՝ չնայած այն բանին, որ արդիականացման հարացույցի վերաբերյալ կան նաև բազմաթիվ այլ հեղինակների մշակած տեսություններ:

Այդուհանդերձ, պետք է արձանագրել, որ նշված դիտարկումները որևէ ձևով չեն նվազեցնում կատարված աշխատանքի գիտական և գործնական կարևոր նշանակությունը:

Ամփոփելով և ընդհանրացնելով աշխատանքի վերաբերյալ մեր մոտեցումները՝ վստահաբար կարելի է եզրակացնել, որ Է.Հ. Օրդուխանյանի դոկտորական ատենախոսությունը արդիական, պահանջված, ամբողջական, գիտականորեն հիմնավորված հայեցակարգային աշխատանք է, որտեղ օգտագործվել են հարուստ և արդիական մասնագիտական գրականություն, միջազգային վիճակագրություն, մի շարք նորմատիվ իրավական ակտեր, որոնք թույլ են տվել ատենախոսին առաջադրված խնդիրները քննության առնել իրենց բազմաբնույթ և համակողմանի ասպեկտներով: Աշխատանքում արված եզրակացությունները և առաջարկությունները փաստարկված են, համոզիչ և հիմնավոր: Թեմայի վերաբերյալ միջազգային գիտական պարբերականներում տպագրված հոդվածները հավաստում են կատարված հետազոտության բարձրարժեքությունը: Ի լրումն ասվածի՝ ուշագրավ են նաև միջազգային գիտաժողովներին ատենախոսության թեմայով ատենախոսի զեկուցումները, ինչը փաստում է, որ կատարված աշխատանքի որոշ դրույթներ փորձարկում են անցել նաև արտերկրում:

Այսպիսով, հաշվի առնելով վերը նշվածը՝ հարկ է ընդգծել, որ Է.Հ. Օրդուխանյանի՝ «Քաղաքական մշակույթի էվոլյուցիան Հայաստանի Հանրապետության քաղաքական գործընթացներում» դոկտորական ատենախոսությունը տեսական և գործնական կարևոր նշանակություն ունեցող

համալիր հետազոտություն է, որը շոշափելի ներդրում է ինչպես ընդհանուր քաղաքագիտության, այնպես էլ ՀՀ-ում քաղաքագիտության զարգացման գործում: Այն լիովին համապատասխանում է ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ դոկտորական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, և ատենախոսն արժանի է քաղաքական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի շնորհմանը:

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Հասարակագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ պատմ. գիտ. թեկն., դոցենտ Է. Հովհաննիսյան

Պատմ. գիտ. թեկն., դոցենտ Է. Հովհաննիսյանի ստորագրությունը հաստատում եմ:
ՀՊՄՀ գիտ. քարտուղար՝ դոց. Մ. Իսպիրյան

02.07.2020թ.